



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՒ
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՍՏԵԱՆ ԹԵՍԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**
Archbishop Moushegh Mardirossian, Prelate
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



ԳՈԼՈՐԱՏՈՅԻ ՅԱՍԱՅՆՔԻ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ

«ԹՈՂ ԱՅՍ Ս. ՊԱՏԱՐԱԳՈՎ ՀԱՐՈՐԴՈՒԻՆՔ ՕՐՈՒԱՆ ՊԱՏԳԱՄՈՎ ԵՒ ՊԱՅՏԱԿԱԿԵՐՊՈՒԻՆՔ ՅՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ ԽՈՐՃՈՒՐԴՈՎ»

Պատգամեց Առաջնորդ Սրբազնան Յայրը

Թեմիս բարեցան Առաջնորդ Բարձրաշնորհ Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընկերակցութեամբ Կրօնական Ժողովի ատենապետ՝ գերապ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեանի Ուրբաթ, 2 Յունիս 2006-ին, հոգեւոր առաքելութեամբ մեկնեցաւ Գոլորատոյի մեր ծխական հայ համայնքը Եւ հանդիպումներ ունեցաւ նորընտիր հոգաբարձական կազմին Եւ Գոլորատոն հաստատուած մեր ծուխի ընտանիքներու հետ: Սրբազնան Յայրը իր բոլոր հանդիպումներու ընթացքին կարեւորութեամբ անդրադարձաւ սփիւրքեան Եւ օտար պայմաններու ներքեւ ապրող մեր ժողովուրդի կեանքըն ներս հայ Եկեղեցւոյ կարեւոր դերակատարութեան, անոր հոգեւոր Եւ ազգային առաքելութեան, միաժամանակ կոչ ուղղելով համայնքային կեանքը ներս առաւել պատասխանատուութեամբ, լրջութեամբ Եւ գիտակից յանձնառութեամբ դրական Եւ շինհի աշխատանք ծաւալելու Եւ Եկեղեցւոյ նիւթեղին ու քարաշեն կառոյցեն առաջ ու վեր՝ ճշմարիտ հոգեւոր Եկեղեցի ըլլալու անհրաժեշտութեան Եւ այս յանուն քրիստոնեայ հայ ընտանիքի առողջ գոյատեւման, նոր սերունդի քրիստոնեական Եւ հայեցի արժեքներով դաստիարակելու նախանձախնդրութենէ թելադրուած:

Կիրակի, 4 Յունիսի յետ միջօրե ժամը 1:30-ին, Առաջնորդ Սրբազնը առընթերակայութեամբ Յայր Սուլրին, Ս. Կապրիէլ Անկլիքան Եկեղեցւոյ մէջ քրիստոնեական Եկեղեցւոյ կարեւորագոյն տօներեն՝ Ս. Յոգևոյ Գալստեան հրաշալի դեպքին առթիւ Ս. Եւ անմահ պատարագ մատուցանեց Եւ իր հոգեշունչ պատգամով անդրադարձաւ.

ա.- Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի հրաշափառ յարութենէն Ետք Անոր քառասնօրեայ Երկրաւոր կեանքին, առաքեալներուն Եւ աշակերտներուն Երեւումներուն, հրաշալի դեպքերուն, վերջին խրատներուն, Ս. Յոգևոյ առաքման խոստումին Եւ հուսկ՝ Երկինք Յամբարձման հրաշապատում դրուգներուն:

բ.- Յամբարձումն տասը օր Ետք, Պենտէկոստի կամ Յոգեգալստեան դեպք Վերնատան մէջ միասիրտ Եւ միախորհուրդ աղօթող Եւ Ս. Յոգևոյ Գալուստը անձկութեամբ սպասող առաքեալներ, ստանալէ Ետք Աստուծոյ Ս. Յոգիին զօրութիւնը, որ կրակէ լեզուներու կերպարանքով իրենց վրայ հանգչեցաւ՝ սկիզբը կը դրուեր քրիստոնեական Եկեղեցւոյ հաստատման: Քրիստոնեական Եկեղեցւոյ ծննդեան այս տարեդարձը Եւ թուականը պէտք է ըլլայ նաեւ Գոլորատոյի Յայր.

Առաքելական Եկեղեցւոյ եւ հայ համայնքին հոգեւոր տարեդարձը, ըսաւ Սրբազանը, որովհետեւ, այսպէս՝ ինչպէս Կստուծոյ Սուրբ Յոգիին գալուստը հրաշակերպեց, կերպարանափոխեց, իմաստութեամբ, զօրութեամբ եւ շնորհըներով զարդարեց առաքեալներն ու Վերևատան մեջ հաւաքուած աշակերտներն ու հաւատացեալները, որոնք այսուհետեւ Աւետարանի քարոզութեան եւ վկայութեան առաքուեցան, նոյնպէս ալ Կստուծոյ Ս. Յոգւոյ պարգեւ շնորհը, հաւատքը, սերը, քաղցրութեան հոգին, հանդուրժողութիւնը, համագործակցական բարի հոգին զտող, բիւրեղացնող ներզօր ազդակները պետք է ըլլան Գոլորատոյի Յայց. Առաքելական Եկեղեցւոյ ու համայնքի կեանքըն ներս:

Առաջնորդ Սրբազան Յայրը վկայակոչեց եւ անդրադարձաւ Յոգեգալստեան դեպին յաջորդող առաքեալներու պատմական գործունեութեան՝ երբ անոնք աշխարհի չորս անկիւնները գացին եւ բոլոր ազգերուն Զրիստոսի փրկարար Աւետարանը քարոզեցին. ան յիշեցուց, որ Զրիստոսի առաքեալներէն՝ Ս. Թադէոսն ու Ս. Բարթողիմէոսը Աւետարանին Բարի Լուրը եւ Լոյսը բերին Յայաստան աշխարհ եւ լուսաւորեցին հայ ժողովուրդը, որ աշխարհի ազգերու եւ ժողովուրդներու մեջ եղաւ առաջինը քրիստոնեական կրօնը հոչակելու ազգային պետական կրօն: Դուք ալ, սիրելիք, ըսաւ Սրբազանը, առաքեալներու եւ մեր հայրերու հաւատքով, նախանձախնդիր ոգիով, մօտիկ ապագային անպայման պետք է ուսենաք ձեր հաւատքի եւ աղօթքի սեփական տուն-Եկեղեցին՝ ծուխի հաւատացեալ զաւակները հոգեւոր եւ ազգային անքակտելի կապերով իրարու զօդելու, համայնքային աշխուժ կեանք ստեղծելու, քրիստոնեական հաւատքով մկրտելու եւ հայու Ս. Միւռոնվ օծելու ձեր սիրասուն զաւակները, նարօտ եւ պսակ օրինելու, հոգեւոր սնունդ մատակարարելու, առաջնորդութիւն եւ միսիթարութիւն բերելու բոլորին:

գ.- Սրբազանը կոչ ուղղեց բոլորին, որ Աստուծոյ ընձեռած պարգեւներէն՝ իւրաքանչիւրը իր կարողութեան համաձայն՝ եւ ուսեցած շնորհըներէն ու բարիքներէն Կստուծոյ եւ հասարակաց բարիքին ընծայաբերէ, տրամադրելով՝ ժամանակ, բարոյական թէ Նիւթական միջոցներ: Ապա, Երգուեցաւ հոգեգալստեան շարականներէն՝ «Սարսափելի հոլմոյ նման» Երգը եւ Սրբազան Յայրը յատուկ աղօթքով օրինեց համայնքի մանուկներն ու երեխաները, Եկեղեցւոյ Վաղուան ժառանգորդները:

Պատարագի աւարտին, Եկեղեցւոյ սրահին մեջ սիրոյ սեղանի ընթացքին, Առաջնորդ Սրբազանը Տիկ. Անսա Գաւաֆեանին շնորհեց օրինութեան եւ գլահատանքի յատուկ գիր, համայնքի կեանքըն ներս Երկար տարիներ որպէս Երգեհոնահար, Եկեղեցւոյ մեջ ծառայութեան առ ի գլահատանք: Սրբազան Յայրը այս առթիւ նաեւ ներկաներուն յանձնեց յատուկ յուշանուերներ:

Մ.Ծ.Վ.Ա.

DURING A VISIT TO THE COLORADO PARISH COMMUNITY

“WITH THIS HOLY MASS, LET US BE FILLED WITH THE MESSAGE OF THE FEAST, AND ENLIGHTENED BY THE MYSTERY OF PENTECOST”

Declared the Prelate

From June 2-4, 2006, His Eminence Archbishop Moushegh Mardirossian, Prelate, joined by Very Rev. Fr. Muron Aznikian, Chair of the Prelacy Religious Council, visited the parish of the Armenian Apostolic Church of Colorado and Rocky Mountain Region, to meet with the newly elected parish council and the parish community.

On the afternoon of Sunday, June 4, the Prelate, assisted by Very Rev. Fr. Muron, conducted Holy Mass and delivered his sermon on the occasion of the Feast of Pentecost, highlighting three main points.

He spoke of the appearances of Christ to the disciples in the forty days after His Glorious Resurrection and His ascension to Heaven. The Prelate also spoke of how ten days after the Ascension, the disciples were gathered at the Upper Room waiting for the Comforter, the Holy Spirit, which descended and rested on each one of them. That day became the birthday of the Christian Church, noted the Prelate, and added that it should also be the spiritual anniversary of the Armenian Apostolic Church of Colorado and the Armenian community. He continued, just as the disciples of our Lord spread the Gospel to the four corners of the world, especially Saints Thaddeus and Bartholomew who spread the Gospel to the Armenian people, you too must follow their example and establish a church in the near future to bind the community to the Armenian Apostolic faith, and offer spiritual nourishment to the faithful. Archbishop Mardirossian requested from those present that to the best of their abilities, each and every one of them must assist in the church by donating their time, or by offering moral or financial support. Subsequently, hymns for Pentecost were sung and the Prelate offered a special prayer for the youth, who are the future of the church.

Following Mass a reception was held at the church hall, where the Prelate presented Mrs. Anna Kavafian with a letter of blessing and commendation for her longtime service to the Armenian Church as an organist. On this occasion, the Prelate also presented those in attendance with mementos.